



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության
առաջին ատյանի դատարանի վճիռ
վարչական գործ թիվ 0019/05/2010թ.
դատավոր՝ Կ.Բեգլարյան

Վարչական գործ թիվ 0019/05/2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«21» ապրիլի 2010թ.

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը՝ վճռաբեկության կարգով

Նախագահությամբ դատավոր՝
Մասնակցությամբ դատավորներ՝

Կ.Ղարայանի
Գ.Գրիգորյանի
Գ.Հարությունյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության ընդդեմ «Դլիժբադ» ԱԿ-ի հաշվապահ Նաիրի Գաբրիելյանի՝ 20.000 դրամ բռնագանձելու պահանջի մասին վարչական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. մարտի 3-ի վճռի դեմ ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Մանուշ Մինասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան հայցվորը խնդրել է պատասխանողից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 20.000 /քսան հազար/ դրամ և մուծված պետական տուրքի գումարը՝ 1.500 /հազար հինգ հարյուր/ դրամ, ընդամենը՝ 21.500 /քսանմեկ հազար հինգ հարյուր/ դրամի չափով գումար:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը /այսուհետ՝ Վարչական դատարան/ 2010թ. մարտի 3-ի վճռով վարչական գործի վարույթը կարճել է՝ վեճը վարչական դատարանին ընդդատյա չլինելու հիմքով:

Նշված վճռի դեմ վճռաբեկ բողոք է բերել ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության /այսուհետ՝ Ծառայություն/ նախագահ Մանուշ Մինասյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վարչական դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածները, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել «Հաշվապահական հաշվառման մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածը:

Նշված պնդումները բողոք բերողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

«Հաշվապահական հաշվառման մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար: Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ կազմակերպության ղեկավարին հնարավորություն է տրված հաշվապահական հաշվառման աշխատանքների ծավալից կախված ընտրել հաշվապահական հաշվառման վարման չորս ձևերից մեկը՝ հաշվապահական հաշվառում վարել.

1/ կառուցվածքային ստորաբաժանում համարվող հաշվապահական ծառայության միջոցով,

2/ կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով,

3/ հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատերերի միջոցով...

4/ անձամբ:

Ընտրելով հաշվապահական հաշվառումը կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով վարելու տարբերակը, «Ղլիժբաղ» ԱԿ-ի ղեկավարը կատարել է օրենքով իրեն վերապահված՝ հաշվապահական հաշվառում վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը ապահովելու իր պարտականությունը: Հաշվապահական հաշվառում կազմակերպելու մեջ թերանալու և իր օրինական պարտականությունները չկատարելու վերաբերյալ հակափաստարկ չի ներկայացրել նաև վարչական պատասխանատվության ենթարկված անձը՝ ԱԿ-ի հաշվապահը:

«Հաշվապահական հաշվառման մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է, որ գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար:

Բողոք բերողը խնդրում է բեկանել և փոփոխել Վարչական դատարանի 2010թ. մարտի 03-ի վճիռը, և Նաիրի Գաբրիելյանից բռնագանձել 20.000 /քսան հազար/ դրամի չափով վարչական տուգանքը և 11.500 /տասնմեկ հազար հինգ հարյուր/ դրամի չափով մուծված պետական տուրքի գումարը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1. 2009թ. երրորդ եռամսյակի ձև 1 առևտուր և ձև 1-Ա /եռամսյակային/ հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնելու համար «Ղլիժբաղ» ԱԿ-ի հաշվապահ Նաիրի Գաբրիելյանի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 23.10.2009թ. թիվ 000548 արձանագրությունը:

2. Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 23.10.2009թ. թիվ 000548 որոշմամբ՝ 2009թ. երրորդ եռամսյակի ձև 1 առևտուր և ձև 1-Ա /եռամսյակային/ հաշվետվությունները ուշացումներով ներկայացնելու համար, «Ղիժբաղ» ԱԿ-ի հաշվապահ Նաիրի Գաբրիելյանը ենթարկվել է պատասխանատվության և տուգանվել է 20.000 /քսան հազար/ դրամի չափով:

3. Նշված արձանագրությունը և որոշումը ստորագրված են Նաիրի Գաբրիելյանի կողմից:

4. ԼՂՀ Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով սույն բողոքը նշված հիմքերի սահմաններում, ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը մասնակիորեն հիմնավոր է և ենթակա է մասնակիորեն բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն.

1.Գործի փաստերը Վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե:

2.Դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ:

3.Դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալու դատական նիստին:

Նշված նորմի մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ օրենսդիրը Վարչական դատարանին ընձեռել է հնարավորություն՝ ակտիվ մասնակցություն դրսևորելու ապացույցների հավաքման և հետազոտման գործընթացում՝ գործով ըստ էության ճիշտ դատական ակտ կայացնելու համար: ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ԼՂՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169/2 հոդվածի առաջին մասով սահմանված է, որ ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից պետական վիճակագրական դիտարկումների համար անհրաժեշտ հաշվետվություններն ու տեղեկատվությունը սահմանված ժամկետներում և ամբողջ ծավալով չներկայացնելը, ինչպես նաև դրանք ոչ սահմանված ձևով, աղավաղումներով և անստորագիր ներկայացնելը՝ առաջացնում են նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Նույն օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

ԼՂՀ Գերագույն դատարանը փաստում է, որ սույն գործով Վարչական դատարանը կարճել է գործի վարույթը, գտնելով, որ «Ղիժբաղ» ԱԿ-ի հաշվապահ, պատասխանող Նաիրի

Գաբրիելյանը պաշտոնատար անձ չի հանդիսանում, առանց ԱԿ-ում պատասխանողի իրավական կարգավիճակը և նրա պաշտոնեական լիազորությունների շրջանակը պարզելու, իսկ սույն գործի նյութերով նշված հարցերը հնարավոր չէ պարզել:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ ԼՂՀ Գերագույն դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վարչական դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի խախտումը հիմք է դատական ակտը բեկանելու համար, ուստի վերանայվող դատական ակտը բեկանելու մասով բողոք բերողի պահանջը ԼՂՀ Գերագույն դատարանը համարում է հիմնավոր, և գտնում, որ այդ մասով վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով ԼՂՀ Գերագույն դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Այսպիսով, ԼՂՀ Գերագույն դատարանը վերը նշված հիմքերի առկայությունը բավարար է համարում՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի երկրորդ մասի ուժով Վարչական դատարանի սույն գործով կայացրած վճիռը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար՝ գործով բոլոր անհրաժեշտ ապացույցները պահանջելու՝ «Ղլիժբաղ» ԱԿ-ում պատասխանող Նաիրի Գաբրիելյանի իրավական կարգավիճակը պարզելու և հիմնավորված վճիռ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ ԱՎԾ նախագահ Մանուշ Մինասյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2010թ. մարտի 3-ի վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Կ. ՂԱՐԱՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ